



Ի՞նչ Պետք Է Իմանաք Ապակողմնորոշող Ծանուցման Մասին

Բովանդակություն

Անբարեխիղճ և մոլորության մեջ գցող գովազդ՝	1
Ինչ մենք արել ենք ապակողմնորոշող գովազդի դեմ պայքարելու համար	2
Ի՞նչ անել, Սոցիալական Ապահովության վերաբերյալ մոլորեցնող տեղեկատվություն ստանալու դեպքում՝	2
Ի՞նչ անել, Medicare վերաբերյալ մոլորեցնող տեղեկատվություն ստանալու դեպքում՝	3
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	3

Անբարեխիղճ և մոլորության մեջ գցող գովազդ՝

Ամբողջ երկրի տարածքում սպարողները հաճախ մոլորեցվում են գովազդողների կողմից, որոնք օգտագործում են «Սոցիալական Ապահովություն» կամ «Medicare» իրենց գոհերին գայթակղելու նպատակով: Հաճախ, այդ ընկերությունները առաջարկում են Սոցիալական Ապահովության ծառայությունները մատուցել անվճար, անգամ եթե նույն ծառայությունները անվճար հասանելի են անմիջապես Սոցիալական Ապահովությունից:

Այդ ծառայությունների թվում են. ստանալ՝

- Ուղղված Սոցիալական Ապահովության քարտ, որտեղ կարտացույցի ամուսնացած կնոջ ամուսնական անունը;
- Սոցիալական Ապահովության քարտ, որը կփոխարինի կորցված քարտը;
- Սոցիալական Ապահովության Հայտարարագիր;
- Սոցիալական Ապահովության համար երեխայի համար:

Որոշ անմիջական գովազդադրեր ակնարկում են, որ Սոցիալական Ապահովությունը գտնվում է ծանր ֆինանսական վիճակում, և որ մարդիկ վտանգում են կորցնել իրենց Սոցիալական Ապահովության կամ Medicare-ի նպաստները, բացառությամբ, եթե նրանք որևէ վճարում կամ անդամավճար փոխանցեն հենց գովազդողին: Այլ ընկերություններ ստեղծում են Սոցիալական Ապահովության հավաստման կամ պատկանելիության կեղծ տպավորություն՝ առաջարկելով «Սոցիալական Ապահովության» կամ դրան առնչվող նպաստի արդիականացում: Սովորաբար այդ ընկերությունները տեղեկատվության հարցում են կատարում սպառողներից և այնուհետև վերավաճառում սպառողների անձնական տեղեկատվությունը: Նման մարքեթինգային գործողությունները պարզորեն մոլորեցնում և խաբում են Ամերիկյան հանրությանը:

Ինչ մենք արել ենք ապակողմնորոշող գովազդի դեմ պայքարելու համար

Օրենքը, որը մասնավորապես առնչվում է Սոցիալական Ապահովության և Medicare-ի վերաբերյալ մոլորության մեջ գցող գովազդին՝ արգելում է մարդկանց կամ ոչ-կառավարական կազմակերպություններին օգտագործել այնպիսի բառեր կամ խորհրդանշաններ, որոնք կմոլորեցնեն մյուսներին: Նրանց գովազդը չի կարող ուղղորդել մարդկանց՝ հավատալու, որ նրանք ներկայացնում են, կամ որևէ կերպով առնչվում են, կամ հավաստված կամ հաստատված են Սոցիալական Ապահովության կամ Medicare և Medicaid Ծառայությունների (Medicare) Կենտրոնների կողմից:

Սոցիալական Ապահովությանը վերաբերող հավանականորեն մոլորեցնող գովազդի դեպքում, Սոցիալական Ապահովության Գրասենյակի Գլխավոր Վերստուգիչը (Inspector General) վերանայում է գովազդը: Իրենց գովազդի վերաբերյալ հարցաքննվելու

ժամանակ, շատ մարդիկ և ընկերություններ կամավոր համաձայնվում են դադարեցնել դրանց օգտագործումը, կամ փոփոխել դրանք՝ օրենքին համապատասխանելու համար: Այնուամենայնիվ, եթե կամավոր համաձայնության ձեռք բերումը չի հաջողվում, ապա Գլխավոր Վերստուգիչի Գրասենյակը (Office of the Inspector General) յուրաքանչյուր փոստով ուղարկված գովազդի համար տուգանում է օրենքը խախտող անձին կամ ընկերությանը մինչև \$5,000: Medicare-ին վերաբերող մոլորեցնող գովազդները պետք է ուղղորդվեն Առողջության և Հումանիտար Ծառայությունների Նախարարության Գլխավոր Վերստուգիչի Գրասենյակ (Office of Inspector General for the Department of Health and Human Services)՝ վերանայման նպատակով:

Ի՞նչ անել, Սոցիալական Ապահովության վերաբերյալ մոլորեցնող տեղեկատվություն ստանալու դեպքում՝

Ուղարկե՛ք ամբողջական գովազդը, ծրարը
ներառյալ, հետևյալ հասցեով՝

Office of the Inspector General
Fraud Hotline
Social Security Administration
P.O. Box 17768
Baltimore, MD 21235

Ինչպես նաև, այդ մասին տեղեկացրե՛ք Ձեր շրջանի գլխավոր դատախազի (attorney general) կամ սպառողների շահերը պաշտպանող (consumer affairs) գրասենյակներին և Better Business գործակալությանը:

Ի՞նչ անել, Medicare վերաբերյալ մոլորեցնող տեղեկատվություն ստանալու դեպքում`

Դիմելք Առողջության և Հումանիտար Ծառայությունների Նախարարության Գլխավոր Վերստուգիչի Գրասենյակին (Office of Inspector General for the Department of Health and Human Services), հետևյալ հասցով`

U.S. Department of Health & Human Services
Office of Inspector General
Attn: HHS Tips Hotline
P.O. Box 23489
Washington, DC 20026

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այեցելեք մեր կայքէջը`

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնետություն վարելու ամենհարմար եղանակը դա մեր **www.socialsecurity.gov** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք`

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)` Ձեր *Social Security Statement* (Սոցիալական Ապահովության հաշվետվությունը) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու,

Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;

- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելեք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը)՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնետությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Չանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ ինդիքներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:



Securing today
and tomorrow